Սրապիոն ինչ որ կարողացաւ, վճարեց եւ փախաւ նրանց ձեռքից ու թաք կացաւ։ Երբ Շահաբբաս եկաւ Երեւան, Սրապիոն կաթուղիկոսը շատ ընծաներով ներկայացաւ նորան, բայց Շահը, որ մտքում դրել էր Մելքիսէթին տալ կաթուղիկոսութիւնը, վատ ընդունելութիւն արաւ, ուստի Սրապիոն երկիւղ կրելով, փախաւ Ջուղայ։

Վերջապէս իննամեայ պաշարումից յետոյ՝ օսմանեան զօրքը ոչ մի կողմից օգնութեան յոյս չտեսնելով անձնատուր եղաւ, եւ Շահաբբաս տիրեց Երեւանին, եւ իսկոյն մուսեթիկների բերանով հրատարակեց, թէ այսուհետեւ Հայոց երկիրը Շահինն է։ Այս բոլոր կռիւների եւ ասպատակութիւնների ժամանակ Շահաբբաս խիստ կերպով հետեւեալ քաղաքականութիւնն էր ի գործ դնում. այն բոլոր ժողովուրդը, թէ մահմետական, թէ քրիստոնեայ եւ թէ եբրայեցի, որ խաները քշել բերել էին Գանձակից, Արծկէից, Վանից, Մանազկերտից, Ալաշկերտից, Մաքուից, Կարսից, Էրզրումից եւ այլ տեղերից, նա ուղարկում էր Պարսկաստան եթէ զարիբական, այսինքն եկաւոր էին, իսկ բնիկներին ծանր հարկերի ենթարկելով յետ էր դարձնում իրանց տեղերը։

Դժբախտ եւ անխոհեմ Դաւիթ եւ Մելքիսէթ կաթուղիկոսները շուտով գտան իրանց յանցանքի պատիժը. նրանք յորդորեցին Շահաբբասին գալ գրաւել Հայաստանն, եւ ձեռնտու եղան նրան այդ գործում, յուսալով ազա-